ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0010 ք.Երևան, Նալբանդյան 28, հեռ. 583734

N - _____

« » **սեպտեմբերի 2018թ.**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարելու վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման հիմքերից է նրա հրաժարականը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարում են սույն օրենսգրքի 20-րդ գլխով սահմանված կանոններով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով դատավորի (Բարձրագույն դատական խորհրդի անդամի) լիազորությունները դադարում են այդ հարցի համար հրավիրված Բարձրագույն դատական խորհրդի նիստում դատավորի (Բարձրագույն դատական խորհրդի անդամի) կողմից իր հրաժարականը պնդելու կամ այդ նիստին դատավորի չներկայանալու օրվանից:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով նախատեսված հիմքերով դատավորի (Բարձրագույն դատական խորհրդի անդամի) լիազորությունները դադարելու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահն անհապաղ հայտարարություն է տարածում դատական իշխանության պաշտոնական կայքում:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացվում է, որ Բարձրագույն դատական խորհրդի 27.09.2018թ. թիվ ԲԴԽ-39-Ո-104 որոշմամբ՝ Ռուզաննա Հակոբյանի կողմից ներկայացված հրաժարականի դիմումի հիման վրա վերջինիս լիազորությունները՝ որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ, 27.09.2018թ.-ից դադարել են:

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ